

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

25.11.2013թ.

ք. Արթիկ

Համաձայն «Հ տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն «Շիրակի մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 127 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ «Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանի /խմբի ղեկավար/, «Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Մարիամ Գյոդակյանի /խմբի անդամ/, «Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի գլխավոր մասնագետ Սուրեն Ավետիսյանի /խմբի անդամ/, «Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյանի /խմբի անդամ/, «Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի /խմբի անդամ/, «Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչության/ գլխավոր մասնագետ Լյովա Հակոբյանի /խմբի անդամ/ «Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի առաջատար մասնագետ Նաիրա Մարտիրոսյանի /խմբի անդամ/, ինչպես նաև «Շիրակի մարզի Արթիկի քաղաքային համայնքի ղեկավար Արսեն Աբրահամյանի, Արթիկի համայնքում իրականացրել է վարչական հսկողություն՝ 2010 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2013 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանի համար:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Վարչական հսկողությունը սկսվել է 2013 թվականի հոկտեմբերի 30-ին և ավարտվել՝ 2013 թվականի նոյեմբերի 19-ին, արդյունքում պարզվել է հետևյալը՝

- 1) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ համայնքի նորընտիր ավագանին ընդունել է իր կանոնակարգը /2012 թվականի նոյեմբերի 30-ի որոշում թիվ 77-Ն/:
- 2) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին հաստատել է համայնքի 2009-2012թթ.զարգացման ծրագիրը /2009 թվականի հունվարի 27-ի որոշում թիվ 4-Ն/:

Ծրագրով նախատեսված թվով 31 ծրագրային աշխատանքներից կատարվել է 18-ը, մարզահամալիրի, մարզադաշտի, դաշտամիջյան ճանապարհների, Ստեկլոմաշ թաղամասի կոյուղու, թիվ 2 և թիվ 3 մանկապարտեզների շենքերի, Արթիկի պետական քոլեջի մարզադահլիճի կապիտալ վերանորոգման, Գծի տակի թաղամասի ջրամատակարարման բարելավման, Պ.Սևակ, Ղուկասյան, Կամոյի, Գ.Նժդեհի փողոցների, բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգման և սալահատակման աշխատանքները չեն կատարվել:

Համայնքի ղեկավարի կողմից օրենքով սահմանված ժամկետում կազմվել է համայնքի 2013-2016թթ. զարգացման ծրագիրը և ներկայացվել է համայնքի ավագանու հաստատմանը /2013 թվականի փետրվարի 12-ի որոշում թիվ 8-Ն/:

Համայնքի զարգացման ծրագրով 2013 թվականի համար նախատեսված թվով 31 ծրագրային աշխատանքներից կատարվել է 8-ը, ջրահեռացման ցանցի, արտաքին լուսավորության ցանցի, բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, հեղեղատարի ցանցի մաքրման, ծառածածկ տարածքների հիմնման, զբոսաշրջության օբյեկտների և դրանց հարող տարածքների, բազմաբնակարան շենքերի և նախակրթարանների բակերի բարեկարգման, նախակրթարանների մոտեցման ճանապարհների սալապատման, նախակրթարանների համար կոմունալ-կենցաղային գույքի ձեռքբերման, սպորտ-առողջարարական միջոցառումների անցկացման, երաժշտական և սիրողական այլ կոլեկտիվների գործունեության վերականգնման, համայնքի պատմության, մշակույթի և սոցիալ-տնտեսական ներուժի մասին տեղեկատվական շտեմարանի ստեղծման, էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքները կատարվել են մասնակի: Ծրագրով նախատեսված հայտարարությունների վահանակների տեղադրման, բուֆերային գոտու ստեղծման, քաղաքի արտաքին տեսքի գրավչության բարձրացման ուղղությամբ համալիր ծրագրերի իրականացման, թիվ 4 դպրոցի ճանապարհի սալապատման, նախակրթարանների հիմնանորոգման, մշակույթի կենտրոնի ջեռուցման համակարգի վերանորոգման, տեխնիկական վերազինման, նյութատեխնիկական բազայի համալրման <<Քաղաքի օր>> տոնի անցկացման և քաղաքապետարանի դահլիճի վերանորոգման աշխատանքները չեն կատարվել:

Չի ապահովվել << կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման պահանջը և զարգացման ծրագրում սահմանված կարգով չեն ներառվել համայնքում սեյսմիկ ռիսկերի գնահատման ու նվազեցման միջոցառումները:

- 3) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» << օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին 23.12.2010թ. թիվ 100-Ն, 16.12.2011թ. թիվ 133-Ն և 19.12.2012թ. թիվ 89-Ն որոշումներով հաստատել է համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեները:

Համայնքի ավագանու 01.12.2010թ. թիվ 88-Ն, 23.12.2010թ. թիվ 101-Ն, 27.01.2011թ. թիվ 4-Ն, 29.03.2011թ. թիվ 12-Ն, 11.05.2011թ. թիվ 39-Ն, 30.05.2011թ. թիվ 46-Ն, 01.07.2011թ. թիվ 57-Ն, 11.07.2011թ. թիվ 63-Ն, 02.08.2011թ. թիվ 67-Ն, 14.09.2011թ. թիվ 80-Ն, 10.11.2011թ. թիվ 92-Ն, 23.11.2011թ. թիվ 113-Ն, 16.12.2011թ. թիվ 134-Ն,